ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԸ

12.12.2015 16:50

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում հանրային պաշտպանների թափուր տեղերի համալրման նպատակով 2015 թվականի նոյեմբերին հայտարարվել էր մրցույթ:

2015 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու մրցույթի գրավոր փուլը, որին մասնակցեցին 57 թեկնածու:

Տեղեկացնենք, որ 2015թ. նոյեմբերի 23-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 9-ը (դիմումների ընդունման համար սահմանված ժամանակահատված) սահմանված կարգով մրցույթին մասնակցելու դիմումներ էին ներկայացրել 64 թեկնածու, սակայն 2015 թվականի դեկտեմբերի 12-ին մրցույթի գրավոր փուլին ներկայացել և մրցույթին փաստացի մասնակցել են 57 թեկնածուներ:

Քաղաքացիական ուղղվածությամբ հանրային պաշտպանի թեկնածուներն առաջադրանք են կատարել թեկնածուների կողմից վիճակահանությամբ ընտրված խնդրով հայցադիմում կազմելու միջոցով, իսկ քրեական ուղղվածությամբ թեկնածուները՝ նույն կարգով ընտրված դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու միջոցով: Առաջադրանքը կատարելու համար թեկնածուներին տրվել է չորս ժամ ժամանակահատված և առաջադրանքի համար անհրաժեշտ իրավական ակտեր:

Թեկնածուների աշխատանքները ստուգելու և գնահատելու է մրցութային հանձնաժողովը: Աշխատանքների գնահատումն իրականացվելու է 10 (տասը) միավորի համակարգով՝ ըստ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընդունված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգով որոշված չափանիշների:

Մրցույթի գրավոր փուլի ընթացքն ըստ կարգի իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում թեկնածուի անձի բացահայտումը (աշխատանքի հեղինակի նույնականացումը) բացառող կարգով: Մրցույթի մասնակիցն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականությամբ արկղից վերցված ծածկագրերը: Մրցույթի մասնակիցն աշխատանքի մեկ օրինակի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում է կնքված արկղի մեջ, իսկ մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը)՝ հանձնվում է հանձնաժողովին:

Կնքված արկղը բացվելու է աշխատանքների արդյունքները հրապարակելուց հետո:

Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած թեկնածուները հնարավորություն կունենան մասնակցելու մրցույթի հաջորդ՝ բանավոր փուլին, որը տեղի կունենա 2015 թվականի դեկտեմբերի 22-ին:

29 30
35 36











910

Առաջարկվող նորություններ

20.11.2015ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄՐՑՈՒՅԹ

17.11.2016ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄՐՑՈՒՅԹ

08.12.2016ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

09.12.2016ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ
ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ
ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })